

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՅՕ-236, 22 հուլիսի 1998թ.) 41-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր բովանդակությամբ հետևյալ խմբագրությամբ՝

«2. Բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման գոտիականության հետ կապված ուղղիչ գործակիցներն են՝

Վայոց ձորի եւ Տավուշի մարզերում	0.5
Շիրակի մարզում	0.6
Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու մարզերում	0.7
Սյունիքի մարզում	0.8
Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերում	0.9
Երեւան քաղաքում՝	1.0

Բեռնատար ավտոմեքենաների միջմարզային, միջպետական բեռնափոխադրումների իրականացման դեպքում կիրառվում է այդ վայրերի համար՝ սույն կետով սահմանված գործակիցներից առավելագույնը»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու նպատակն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնողների հաստատագրված վճարների հաշվարկման գոտիականության հետ կապված ուղղիչ գործակիցների նվազեցումը, որը թույլ կտա սոցիալական այդ հատվածին որոշ

չափով գերծ պահել ճգնաժամի ուղղակի ազդեցությունից, որը պայմանավորված է բեռնափոխադրումների ծավալների անկմամբ: Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս չխուսափել հարկային դաշտից, ինչպես նաև նպաստում է կենսաթոշակային պարտադիր վճարումների կատարմանը: Օրինագիծը համահունչ է նաև սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վերաբերյալ պետական քաղաքականությանը:

Յեղիևակներ` [Գագիկ Գեւորգյան](#), [Բագրատ Սարգսյան](#), [Լիլիթ Գալստյան](#), [Արտյուշ Շահբագյան](#), [Արծվիկ Մինասյան](#)